

ՀԱՆԴԷՍ ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ ՇՐՋԱՆ ԴԻԻՏԻ ՕԴԱՊԱՐԻԿ ԳԵՏՈՅ

Մարդկային կենաց ընթացից մէջ ամենայն ինչ, նաև դարդացման արգել-ներն անգամ զինքը դէպ յառաջագի-մութիւն կը մղեն. երկբայութեանց հա-զար ու մէկ տեսակ վարդապետական գրութիւնք, սկեպտականաց փաղանգ-ներ, նախանձոտաց բանականեր, և ու-րիշ ասոնց նման խոյրնդոտք՝ ժխտելով հանգերձ՝ յառաջդիմութիւն կը պատ-ճառեն այն իրաց՝ զորս կը մերժեն. ուրով մարդկային հանճարոյ իմանալի գունտն՝ երկրագնդոյս նման անգաղար իւր սեփական պարուրածն չըլանը կա-տարած ժամանակ, կը դառնայ 'ի նմին ժամանակի նաև ծանրութեան հասա-րակաց կենդրոնի մը, իրեն յատուկա-րեգական մը վրայ: Յիրաւի մինչև ցայս-օր ետևէ ետև եղած գիւտերուն ար-դիւնադորձ սերմն՝ 'ի մարդն 'ի սկզբա-նէ արարչութեան ցանուած է, բայց չի թուանիր առանց մշակուելու: Ետտ ան-գամ երբ վարժ և կամ՝ բարեբաղդ ձեռք մը կարող կը լինի արդիւնաբեր դործելու այն կենսակիր՝ բայց ինքնա-կեաց սերմը, և ահա բաղմամբիկ նա-խանձուտք՝ հնարողին փառքը նսեմացը-նելու դիտմամբ, կը դիմեն 'ի պատմու-թիւնս անցելոյն, հոչակելու մարդկան՝ որ այն գիւտին գաղափարն ոչ է նոր ինչ, և թէ յառաջագիմութիւնն ոչ այլ ինչ է՝ բայց միայն առերևոյթ պատ-րանք մի. առանց մտածելու՝ որ պատ-մութեան մէջ նոր ժամանակաց գիւ-տերու դաղափարք կ'երևութանան այն ձևով միայն՝ ինչպէս 'ի բնութեան կըր-կներևոյթ ըսուած տեսին, և կամ 'ի կը-րօնականս, եթէ ներքի է այսպէս բա-ցատրել՝ մարդարէութիւնն:

Ժամանակ մը յիմարութիւն կը հա-մարուէր և առասպելապատում ցնորք՝ օդոյ մէջ բարձրանալ և ճանապարհոր-դելն. բայց հագիւ թէ առաջին օդա-գնաց դունտն մինչև յամպս վերանալով՝ իւր փոքրիկ ուղեորութիւնը կատարեց, և ահա մէկէն նոյն այն անձինք, որք օ-դաչու ընթացքն յիմարութիւն կը քա-րողէին, փոխանակ մեծանձն ոգւով ի-րենց կանխակալ կարծեաց սխալանքը խոստովանելու, և հասարակաց հետ զը-րուստելու մարդկային գիւտաւոր միա-քը, սկսան հոչակել որ այն գիւտն ոչ նոր ինչ էր. և ահա անդէն իկարէ և թրակացի կախարդք, և մարգարէք Ս. Գրոց, և այլ բաղմամբ յարմար և ան-յարմար օրինակք և վկայութիւնք, դէպ 'ի լուսին և 'ի մուրթակս կատարուած առասպելածին զրոյցք, 'ի հնութենէ, 'ի ցեղակեր մատենից 'ի մէջ բերուեցան:

Սակայն յաշտակոտաց այս եպիբելի ջանքն 'ի զուր կը ճգնի ընդդէմ՝ այն աստուած ոյին հրամանին, որոյ ձեռքին մէջ մարդկային միտքն լակ գործի մ'է և ոչինչ աւելի. 'ի զուր կ'աշխատի նսե-մութեան և խաւարի մէջ անհետացընել այս անմահական դորձոյն արդիւնքն, մինչդեռ ապագայ դարք կը հոչակեն և պիտի հոչակեն այն հանճարները՝ հնա-րիշ և յայտնող ծածկեալ սքանչելեաց:

Յովսէփ (1740-1810) և Ստեփանոս (1745-1799) Մոնկոֆիէ եղբարք թըղ-թագործութեան և վաճառելու կը զբա-ղէին իրենց հայրենեաց մէջ՝ յլիննոնէ, քիչ հեռի 'ի լիսնէ. ժամանակաւ եր-կուքն ալ ուսեր էին փիլիսոփայութիւն և տարրաբանութիւն: Իրենց ունեցած արուեստին առթիւ՝ շատ անգամ ձեռ-չ

քերնին կ'անցնէին ամենաբարակ շիւնուած սարդոստայնի նման թղթեր, որոնք իրենց թեթևութեան պատճառաւ ձեռնածութեան ժամանակ դէպ 'ի վեր կարծես կը բազմային բարձրանալ: Այս թղթերն եղանակաւ որ զարթուցին Մոնկոլֆիէ եղբարց մօտց մէջ՝ օգտուելու ուղեորութեան հնարաւոր դադարաւոր: Աւտո օդապարիկ գնացողներն շնորհեցին մեզ իմաստասէր՝ որք դիպուածով թղթագործութեան կը պարագլխին, կամ թղթագործք՝ որք դիպուածով իմաստասէր ալ էին:

Առաջին փորձը կատարեցին 'ի 1783, յունիսի 7ին, նախ ջրածին կազ գնելով բարձրանալիք ընդունարանին մէջ, որ ինչուան կէտ մը միայն յաջողեցաւ բարձրանալ, յետ որոյ՝ ուրիշ գնահաղան փորձերէ վերջը՝ կրակ վառեցին մեծ և ընդարձակ տարածութեամբ թղթոյ կոյտի մը տակը. և 'ի զորմանա ամենուն՝ սկսաւ թռչելուն ուռիլ և մեծ զընտոյ մը ձևն առնուլ, յանալով կտրել իր հետդհեմէ առողական զօրութեամբ՝ զինքն երկրիս հետ միացնող շուանիկները. որն վերջապէս խորտակուլով ամէն արգեններն՝ սաստիկ արագութեամբ բարձրացաւ օդոյ մէջ, և հորիզոնական շրջան մ'ընելով՝ կամաց կամաց հանդչեցաւ դարձեալ երկրիս վրայ: Փորձին յաջողութեան համբաւն՝ փայլակի պէս շուտով ամէն զի տարածուեցաւ, և սկսան զանազան փորձեր կատարել:

Թէպէտ և Մոնկոլֆիէ եղբարոյ գիւտը՝ ուրիշներն շատ կատարելագործեցին, բայց միշտ գիւտոյն առաջնութեան փառաւոր պարծանքն իրենց վերապահաւ է. որոյ 'ի պատիւ՝ յԱննոնէ՝ իրենց հայրենեաց մէջ, այս տարի դաւրագործին հանդիսաւոր տանին՝ արձան կանգնուեցաւ Մոնկոլֆիէ եղբարց, և առանձինն մետալ ձուլուեցաւ:

Մոնկոլֆիէ եղբայրներէն վերջը օդաչու ուղեորութեան կատարելագործողք եղան կարողութեամբ Ռոպէր, որովք փոխանակ Մոնկոլֆիէ եղբարց նման անդայտացեալ օդով գունտը վեր հա-

նելու, մտածեցին ջրածին կազ գործածել, որ 15 անգամ աւելի թեթևագոյն է օդոյ ծանրութենէն, և առաջակամ խեղճ օծուած կերպասեայ գնտով կրցան 1783ին զեկամբեր ամսոյն մէջ յաջողութեամբ բարձրանալ 'ի վեր քան զամպս, 'ի զարմանա բռնանշակ թարիզեցոց: — Այս երկուքէն վերջը անուանի եղան օգտուելու ուղեորութեան մէջ փխդոր տը Ռոպէր, որուն շինած մեքենան բաղադրութիւն մ'էր Մոնկոլֆիէ եղբարց և կարողութիւնն իրաւին. բայց փոխանակ յաջող ելք մ'ունենալու՝ օդոյ մէջ բռնկեցաւ մեքենան, և ինքն անհուն բարձրութենէն զահալածելով՝ ընկաւ մեռաւ: Ոչն աղետալի կատարածն ունեցան նաև Մամպէքարի իտալացին, Տիկինն Պլանշար, որոյ այլն Պլանշար՝ առաջին անգամ՝ յաջողութեամբ օգտուելու գնտով յԱնգղիոյ անցաւ 'ի 1785 ամին՝ Մանչի ծովը, և իշաւ փալէի ծովեզերքն իբրև օդաչուաց ճանապարհորդք երեւի են դարձեալ կարներէն, Վ. Լունարդի, Տէկինն Սադլէր, Հ. Գոքսփէլ, Պ. Գոքինկս, Յ. Կլասիէ. բայց քան զամէնն երեւելի եղաւ կարողութեան անգղիացին, որ իրեն կատարելագործեալ արագընթաց գնտով՝ կրցաւ 1836ին նոյեմբերի մէջ, 450 փարսախ տեղ՝ 21 ժամուան մէջ կտրել, արագութիւն մը՝ որուն թրուաւնք անգամ չեն կարող զուգընթանալ: Կրկնէն վերջը մինչև մեր ժամանակն թէպէտ և բազումք ետեւ եղան ուսումնական դիտողութեանց և կամ պատերազմական աշխից մէջ օդուտ քաղելու՝ Մոնկոլֆիէ եղբարց գիւտէն, սակայն բաց 'ի փորձիկ փոխախուսութեանց՝ նշանաւոր յեղափոխութիւն մը դեռ չկարողացան տալ գիւտոյն յառաջադիմութեան: Պակայն մարդկային միտքն յառաջ կ'ընթանայ. և ով կըրնայ դիմախսուել թէ օր մ'ալ նաև 'ի բարձունս ձկտիլ չկարողանայ. հրաշալի գիւտերուն՝ իննետասներորդ. ներկայ դարս դեռ չէ կնքուած: